Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Ջաջուռի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար 1-ին դասարանի՝ 13 դասաժամ, դասվար 3-րդ դասարանի՝ 16 դասաժամ, դասվար 4-րդ դասարանի՝ 17 դասաժամ և երաժշտություն՝ 6 դասաժամ

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը : Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում՝ (Ձև 1),
- մեկ լուսանկար՝ 3#4 չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարության հրապարակման օրվանից հունվարի 17-ից մինչև հունվարի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **հունվարի 31-ին՝ ժամը 10:00-ին**, ՀՀ Շիրակի մարզի <<Ջաջուռի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում.հասցե ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք բնակավայր Ջաջուռ փողոց 3 շենք 57: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)165774 հեռախոսահամարով: